

## ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### 2007 թվականի երկրորդ կիսամյակում կատարված կադրային աշխատանքների հաշվետվություն

2007թ. երկրորդ կիսամյակում ՀՀ ԱՎԾ աշխատակազմում՝  
աշխատանքի է ընդունվել 26 մարդ, որից՝

*քաղաքացիական ծառայության պաշտոններում -19*

*քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում-6*

*ծառայության գրասենյակում -1*

աշխատանքից ազատվել է 22 մարդ, որից՝

*քաղաքացիական ծառայողներ - 19*

*քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի*

*նշանակվածներ -1*

*ծառայության գրասենյակում -1*

*տեխնիկական սպասարկում իրականացնող - 1*

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համարելու համար ՀՀ ԱՎԾ աշխատակազմը անցկացրել է 19 մրցույթ, իսկ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը՝ 8 մրցույթ, որից 3-ի արդյունքում հաղթող չճանաչվելու պատճառով նշանակում չի կատարվել:

Արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակվել է 24 քաղաքացիական ծառայող:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով քաղաքացիական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճաններ են շնորհվել երկրորդ ենթախմբի գլխավոր պաշտոններ զբաղեցնող 4 քաղաքացիական ծառայողի, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 21 քաղաքացիական ծառայողի:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

	Գլխավոր պաշտոններ	Առաջատար պաշտոններ	Կրտսեր պաշտոններ
Վերապատրաստվել են	1	19	3
Ատեստավորվել են	4	12	18
Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել գրադեցրած պաշտոնին	1	-	1

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ինստիտուտի, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի թվով 100 ուսանողների համար:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով 3 քաղաքացիական ծառայող խրախուսվել է շնորհակալագրով, ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով 1 քաղաքացիական ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողություն: